

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

ՅԱԿՈԲ ՆԵՐՍՈՅԵԱՆ

ՄԻՒՍ ԱՇՏԱՐԱԿԸ

ԱՀԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ ՀԱՅԱԿԱՆ ԲՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՏԵՍԱԿԷՏ

Տեսակետ. Չափապանցությունն չի լինի եթե, ասենք, թե քրիստոնեական ամբողջ վարդապետությունը մեկնաբանությունն է Յովհաննու Աւետարանի առաջին գլխի տասնչորսերորդ համարի. «Եւ Բանն (Որ Աստծու մօտ էր, Որ Աստուած էր), մարմին եղաւ ու բնակուեց մեր մէջ»: Բոլոր գլխաւոր հերետիկանները ուսմունքներ են, զորս Հոգիանկարական եւ Ողորպիաւ Եկեղեցին վերոնշեալի սխալ մեկնաբանությունն է համարում: Ըստ Հռոմէական Կաթողիկ եւ Յոյն Ողորպիաւ Եկեղեցիների, այս համարը պէտք է հասկանալ այսպէս. գոյություն ունի երկու բնություն՝ մէկը աստուածային եւ միւրը՝ մարդկային, որոնք միաորոտած են Յիսուս Բրիստոսի անձի մէջ, սակայն անշփոթելի, անփոփոխելի, անբաժանելի եւ անբաժնելի կերպով: Հայաստանեայց (Կիւրեղեան) Եկեղեցին այս բանաձեւումը համարում է իբրեւ մի փոանգաւոր, նոյնիսկ սխալ ներկայացում: Ի նշու: Որովհետեւ կարող է դա առաջ բերել անկամքի ձեւորում Յիսուս Բրիստոսի մարդկային եւ աստուածային բնությունների միջեւ, եւ հերքի այն վարդապետությունը, թե Յիսուս Աստուած էր, որ խաչուեց: Հայաստանեայց Եկեղեցին, սկսած Մարտին Լուտերի ժամանակից եւ դրա վարձագումներին համընթաց, որոնք քննադատում են Հռոմէական Եկեղեցու սահմանումը, պաշտանում է Կիւրեղի նախընտրած բանաձեւը. «Մի է բնություն Բանին Մարմնացելոյ»: Սա նուազ փոանգաւոր եւ աւելի յաջող տարբերակ է, որը սահմանում է, թե Յիսուս Բրիստոս եւ Աստուած է եւ թե միաժամանակ մարդ:

Ըստ փիլիսոփայ Դաւիթ Հիւմի տեսութեան, այն ամէնը, ինչ մենք գիտենք, կա՛մ տպաւորություն է, կա՛մ գաղափար: Տպաւորությունը մի պատկեր է իմ գլխում, ինչպէս բաժակի պատկերը: Գաղափարը մի բան է, որը եւ չեմ կարող պատկերացնել այնպէս, ինչպէս կարելի է պատկերացնել բաժակը: Օրինակ՝ արդարությունը ոչինչ չի ներկայացնում: Ըստ Հիւմի, մի գաղափարը, որ չի կապում տպաւորութեան, նշանակություն չունի: Օրինակ, արդարությունը չնայած որ գաղափար է, բայց ինչ որ բան է ներկայացնում, որովհետեւ եւ կարող եմ կապել այն տեսանելի արդար արարքների հետ, ինչպէս վճարում են ճիշտ գումարը՝ կատարում գնումների դիմաց:

Սակայն այս առոնին փիլիսոփայությունը, որը հնարաւոր է այդքան էլ ճշգրիտ չլինել, ի նշ կապ ունի Կիւրեղեան Բրիստոսաբանութեան հետ:

Հիւմի տեսությունը անհրաժեշտ է այս խնդրի առումով, որովհետեւ այն բացատրում է մի բան, որ ինքը մոռալի էր բացատրելու: Այն բացատրում է փոխաբերությունների գործածությունը: Մենք վերացականը բանը աւելի լաւ ենք ըմբռնում, երբ այն վերածում ենք պատկերաւոր մի բանի: Փորձելով մտքի մէջ պատկերի վերածել Հայաստանեայց Եկեղեցու դաւանումը, թե Աստուած մարդանում է՝ առանց դադարելու Աստուած լինելուց, եւ պարտաւոր եմ դիմելու մի ստիպողաբար անկատար փոխաբերութեան, որը օգտագործել եմ ուրիշ առիթներով: Պիտի համարձակուեմ ասել, Աստծոյ գաղափարը, որի մասին խօսում ենք, կարող ենք բաղդատել ովկիանոսի գաղափարի հետ, իսկ մարդկային էակի գաղափարը՝ ծփացող սառցազնոյի գաղափարի հետ: Մենք կարող ենք ասել ուրեմն, թե Աստուած աշխարհում

դառնում է մարդկային էակ՝ առանց դադարելու Աստուած լինելուց, մօտառորապես այնպիսին, ինչպես որ Սառուցեալ ովկիանոսը դառնում է անսովոր, անարատ ծփացող մի սառցագունդ՝ առանց դադարելու ովկիանոս լինելուց: Այս խնամով է, որ Աստուած առաքեց իր Միածին Որդուն՝ նկատի ունենալով, որ Հայր Աստուածը և Որդի Աստուածը Սուրբ Հոգու հետ համագոյ են: Հայաստանեայց Եկեղեցու Մարդեղութեան հասկացողութեամբ, բնութիւնները յոգնակի ընկալելու մասին խօսք լինել չի կարող: Յիսուս Բրիստոս պէտք է ճանաչուի մէկ բնութեամբ, որը թէ՛ աստուածային է և թէ՛ մարդկային, ինչպես ծփացող սառցագունդը, որ միաժամանակ թէ՛ ովկիանոս է և թէ՛ ծփացող սառցագունդ:

Օգուակար է նաեւ նկատի ունենալ հետեւեալը, որ հայերը, չորրորդ դարում ընդունելով Բրիստոնէութիւնը, յամենայն դէպս երբեք չեն նախաձեռնել ոչ մի մեծ յարձակողական պատերազմ՝ փափագելով նուաճել և տիրել ուրիշների տարածքները:

ԱՀԱԲԵԿԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Նոր Կոստպարանում ահաբեկչական մէկ գործողութեան և մի աշտարակի աղետալի փլուզման մասին տեղեկութիւն կա: Դրանք երկու առանձին դէպքեր են, սակայն Յիսուս քննում է դրանց մէկ լոյսի տակ: Բանի որ Իր դիտողութիւնները մի որեւէ կացութեան մասին յստեղծական նշանակութիւն ունեն, մեզ էլ հետաքրքիր է, թէ Նա ինչ կ'աւեր այդ երկու ողբալի պատահարների կապակցութեամբ, ի տես, մասնառորապէս, 2001 թուականի Սեպտեմբեր 11-ին Ամերիկայի վրայ կատարուած ահաբեկչական յարձակման: Պէտք է յիշենք, որ այդ պատահաբաւ օրը երկու առեանգում ինքնաթիռներ միարժուեցին Նիւ Յորքի Համաշխարհային Առեւտրի Կենտրոն երկուորեակ աշտարակների մէջ: Աշտարակները փլուզուեցին, հապարաոր մարդիկ և կանայք սպանուեցին, և դա աներաժութեան միայն մի մասն էր: Զգալի կործանում և մարդկային կեանքի կորուստ կար նաեւ Վաշինգթոնում: Արթուն, հերոս ճամբորդներ պատճառ եղան, որ ուրիշ մի առեանգում ինքնաթիռ փշրուի Ֆիլադելֆիայի մօտ՝ նախքան իր ահաոր ծրագրի իրագործումը:

Սուրբ Ղուկասի գրքում ահաբեկչութեան և աշտարակի փլուզման պատմութիւնները հետեւեալներն են.

Այն ժամանակ որոշ մարդիկ այնտեղ էին և պատմեցին Յիսուսին Գալիլիացիների մասին, որոնց արիւնը Պիղատոսը խառնել էր Աստծուն մատուցում զոհաբերութեան արեան հետ: Յիսուս պատասխանեց նրանց. «Բանի որ այդ Գալիլիացիները այդ կերպով սպանուեցին, կարծու՞մ էր, թէ դա ապացուցում է, որ նրանք ատելի մեղաւոր էին, քան միւս բոլոր Գալիլիացիները: Ասում եմ ձեզ, ո՛չ: Եւ ես ասում եմ ձեզ, եթէ դուք էլ չապաշխարէք, դուք նոյնպէս կը կործանուէք: Իսկ ի՞նչ կ'աւեր այն տասնութ մարդկանց մասին, որոնք մահացան Սիլովամում, երբ աշտարակը ընկաւ նրանց վրայ: Կարծում էր սա ապացուցու՞մ է, թէ նրանք ատելի վատն էին, քան այն միւս ժողովուրդը, որ ապրում է Երուսաղղմում: Ասում եմ ձեզ, ո՛չ: Եւ ես ասում եմ ձեզ, եթէ դուք էլ չապաշխարէք, դուք նոյնպէս կը կործանուէք:

Այն ժամանակ Պաղեստինը Հռոմէական իշխանութեան ենթակայ էր: Նահանգապետը Պոնտացի Պիղատոսն էր: Այդ օրերին Հռոմէական բանակի պնտորների համար սովորական էր Երուսաղղմում և այլուր, քանապան

առիթներով, Կայսեր պատկերով ասեղնագործում կամ նկարում դրոշակներ կրելը, շքերթներ կազմակերպելը: Բշխանությունները պահանջում էին, որ Կայսրը յարգու էր եւ նոյնիսկ իբր Մի Աստուած պաշտուէր: Սա մասնաւորապէս խռովում էր Գալիլիացիներին: Նրանք պաշտում էին Իսրայէլի Մի Աստծուն: Նրանց որոշ կրօնական արարողութիւնները պահանջում էին, որ նրանք զոհեր մատուցէին, մի պարտաւորութիւն, որից նրանք մոռալիւ չէին հրաժարուել: Հռոմէացիներին հաճեալու համար: Պիղատոսի համար այս հանրային ծիսակատարութիւնները անհանդուրժելի եւ բացարձակ արհամարանքի արարքներ էին:

Հռոմի կողմից կառավարուող երկրում Բարայեյի Աստծուն զոհ մատուցելը նշանակում էր մերժել Կայսեր՝ իբր բացարձակ Բշխող և կրօնական նուիրումն առարկայ։ Պիղատոսը կամենում էր լինել այնպիսի մի կացութեան մէջ, որ կարողանար հաղորդել Հռոմի Սենատին, թէ իրեն վստահուած հողատարածքների բոլոր ժողովուրդը Կայսեր հաւատարիմ հպատակներ են։ Անկասկած, սա էր պատճառը, որ մի օր նա իր մարդկանց ուղարկեց կոտորելու Գալիլիացիներին, և խառնելու նրանց արինը իրենց զոհաբերած կենդանիների արեան հետ։ Նա փորձում էր Գալիլիացիներին իրեն ենթարկել՝ ահաբեկելով նրանց։

Պիղատոսի մարդիկ չկարողացան այդ առիթով այնտեղ համախմբուած բոլոր Գալիլիացիներին կոտորել: Ունակ կարողացան խոյս տալ: Ժողովուրդը, որ Յիսուսին հարցրեց այդ արինահեղութեան մասին, կարծում էր, թէ նրանք, ովքեր խոյս տուեցին, այլ պատճառով էր, որ ապատուեցին: Առանց Աստծու կամքին, ինչպէս նրանք հատուատուն կերպով հաւատում էին, ոչինչ չի պատահում: Եւ քանի որ Աստուած պատժում է մեղքը եւ վարձատրում առաքինութիւնը, նրանք, ովքեր մահացան կարծում էին, թէ պէտք է ինչ որ կերպ մեղանչած լինէին Աստծու դէմ: Յիսուսին հարցապնդողները ենթադրում էին, թէ քոհերի կանխահաս մահը աստուածային մի պատիժ էր:

ԶՈՀՈՒԵԼ՝ ՉԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ ԱՍՏԾՈՒ ԿՈՂՄԻՑ ՊԱՏԺՈՒԵԼ

Յիսուս պարզ եւ յստակ կերպով մեղծում է այդ տեսակետը: Ո՛չ, ասում է Նա, Գալիլիացիները, որոնք մահացան, չմահացան Աստծոյ դէմ մեղանշած լինելու պատճառով: Բայց դա չի նշանակում, թէ կեանքի մի ապրելակերպ, որ անհաճոյ է Աստծոյ կամքին, չունի աշխարհում կորստաբեր հետեւանքներ. «Դուք նոյնպէս կր կործանուէք - եթէ չապաշխարէք»:

Մարդիկ, որոնք գրում են սոսկալի բաների մասին, որ կատարում են Աստծու կողմից կառավարուող տիեզերքի մեջ, յստակ պատրոշում են երկու տեսակի չարություններ՝ բարոյական եւ բնական: Գալիլիացիների կոտորածը կարելի է համարել բարոյական չարության օրինակ այն իմաստով, որ այն հետեւանք էր մի անձնաւորութեան միտումնաւոր որոշման: Պիդատոսը կարող էր այլ կերպ որոշել եւ այդ պարագայում անմեղ մարդիկ չէին մահանայ:

Հարությունը բնական է, երբ այն ինչ-որ մեկի միտումնաւոր որոշումը է։ Յատակելու համար իր տեսակետը՝ Յիսուս յիշատակում է Սիլովամի աշտարակի օրինակը։ Այդ աշտարակի փուլումը պէտք էր, որ իրական մի դէպք եղած լինէր։ Յիսուս ակնարկում է նրան իբրեւ մի դէպք, որի մասին բոլորը գիտէին եւ յիշում էին մանրամասնութիւններ՝ ներառեալ մահացած մարդկանց ճշգրիտ թիւը։ Այս պատմութեամբ մենք ունենք բնական չարութեան մի օրինակ, եւ այստեղ եւս Գալիլիացիները պէտք է ընդունէին որ, ի հարկէ,

եթէ նրանք ցանկանում էին, որ իրենց տարբեր հաստատվիքները իրար հետ համատեղելի լինէին, այդ տաանություն էլ պետք է մահացած լինէին ինչ-որ պատճառով: Արդե՞օք նրանք պատժուել էին Տաւր Պատուիրաններից մէկը կամ միւսը խախտած լինելու պատճառով:

Յիսուս դարձեալ շեշտակիօրէն մերժում է այդ հաստորը: Կործանուած աշտարակի Կոհերը ատելի վատը չէին, քան Երուսաղէմի միւս ժողովուրդը. «Բայց եթէ չապաշխարէք, դուք նոյնպէս կը կործանուէք»: Յիսուս, ի տարբերություն աստուածաբանների, խորություն չի դնում «բարոյական» եւ «քնական» չարությունների միջեւ: Ողբալին այն իրողությունն է, որ թէ՛ Պիղատոսի եւ թէ՛ աշտարակի Կոհերը «կորան», եւ եթէ մենք էլ չապաշխարենք, մենք բոլորս նոյնպէս կը կործանուենք:

Յիսուսի ուսուցման պարպոթիւնը յաճախ շփոթեցուցիչ է: Վերը նշուած իր խօսքերը այդ կէտն են շեշտում: Օրինակ, դրանք ճշգրիտ չեն համապատասխանում Նոր Կտակարանի մէջ գրի առնուած Յիսուսի միւս խօսքերի հետ, որոնք ասում են, թէ ինչ որ պատահում է աշխարհում, Աստծու կամքի մի մասնաւոր արտայայտութիւնն է: Յիսուս իր առաքելութեան ընթացքում մէկ անգամ յիշեցրեց իր ունկնդիրներին, թէ մի ճանդուկ մէկ պեննիից պակաս արժէ. «Սակայն, ոչ մի ճանդուկ Աստծու կողմից չի ստացւում»: Ապա Նա բերեց Աստծու նախախնամութեան էլ ատելի գրաւիչ օրինակ. «Նոյնիսկ ձեր գլխի բոլոր մազերը հաշուում են», - ասաց Նա:

Բայց եթէ Աստուած հոգաւոր է աշխարհով եւ նրա մէջ կատարուող ամենավերջին մանկութով, ինչպէ՞ս կարող էր Նա անտեսել Գալիլիացիների կոտորածը եւ աշտարակի փլուզումից Կոհուածներին: Եթէ նրանք ատելի վատ կամ ատելի լաւ չէին, քան ուրիշ մէկը, ապա ինչու՞ հենց նրանք մահացան:

Պատասխանը կարելի է ենթադրել. չնայած ամէն բան կատարում է, ինչպէս Աստուած է կամենում, սակայն չկայ տրամաբանական կամ անհրաժեշտ կապ աստուածային նախախնամութեան եւ ինչ որ բացառիկ մարդու տուեալ պատահարի միջոցով նրա վնասուելու կամ օգտուելու միջեւ: Երբ երեխան խաղալիքը ցած է նետում իր սենեակից, գտնուելով տասելորդ հարկում, ձգողական օրէնքը չպիտի դադարի կիրառուելուց, եւ խաղալիքը չի կարող մնալ առկախ օդի մէջ, որովհետեւ ճիշտ այդ պահին, մի անձնատրոյթիւն կայ պատուհանի տակ եւ այդ անձը մի անմեղ երեխայ է: Այս կապակցութեանը կարելի է մոտենալ այն օրերի մասին, անմիջապէս իր առաքելութիւնից առաջ, երբ Յիսուս մերժեց փորձել Իր Տօրը, խնդրելու Տօրից դադարեցնել նոյն ձգողականութեան օրէնքը, որպէսպիսի Նա՝ Յիսուսը, ցոյց տայ Սառսանային, թէ Ինքը իրօք Աստծու Ողինն է: Գալիլիացիներին տրուած Իր պատասխանը հաստատում է այն տեսակէտը, թէ դժբախտ պատահարից Կոհուելը, լինի այն մարդկային որոշման հետեւանքով թէ ոչ, չի նշանակում աստուածային անհաւանութիւն: Աստծու արարչագործութիւնը պետք չէ բացառուի իբրեւ մի համակարգ, որը պարզեւներ եւ պատիժներ է բաշխում ժողովրդին, որոնք բնակում են աշխարհում: Կայ նաեւ հետեւեալ յաւելեալ նկատառումը:

Եթէ մի դժբախտութիւն, որը պատահում է որեւէ անձի կամ համայնքի հետ, պետք է համարուի Աստծու կողմից այդ մարդուն կամ համայնքին տրուած պատիժ, ապա մենք պատճառ կ'ունենանք չօգնելու ֆիլիքական, հոգեբանական եւ մտաւոր հիւանդներին, կամ նրանց, որոնք այս կամ այն պատճառով գտնուում են ֆինանսական նեղ կացութեան մէջ: Եթէ որեւէ անձի ձախողութիւնները նշանակելին, թէ այդ անձը Աստծուն հաճելի մէկը չի, ապա Բարի Սամարացին, քրիստոնէական առաքիւնութեան օրինակ դառնալու փոխարէն, դառնում է Աստծու հրահանգը անգունող մի մարդ: Ինքը եւս տեսնելով մարդուն

կողոպտուած եւ ծեծուած մահաւնէր՝ պատկած փողոցում, ինչպէս իրենից առաջ քահանայն եւ դէուացին արեցին, հետեւելով նրանց օրինակին, կարող էր քայլել եւ հեռանալ: Սամարացին կարող էր մտածել. «Եթէ Աստուած Իր անասնման իմաստութեամբ պատժել է այս մարդուն, ես ո՞վ եմ, մի պարզ եւ անգէտ արարած, որ գնամ Աստծու կամքին դէմ եւ «պատժից ապառեմ» նրան»: Յիրաւի, այսպէս չէ, ինչ Բարի Սամարացին արեց եւ մտածեց: Հակառակ, որ պատուում էր շատ կարեւոր գործերով, կանգ առան եւ սատարեց հիւանդին: Վճարեց կանխիկ գումար եւ խոստացաւ բժշկական եւ միւս բոլոր հոգատարութիւնների համար աւելի վճարել, եթէ անհրաժեշտութիւն պահանջէ: Եւ այս ամէնը մի մարդու համար, որը Սամարացուն բոլորովին անձանօթ էր: Նա չէնթաղրեց, թէ դժբախտութեան այս պոկը Աստծու կողմից է պատժուել՝ որոշ յանցանքների համար, եւ պէտք է առանձին թողնուի: Պատահական չէ, որ Յիսուսի առակներում շատ չեն մարդիկ, որոնց մասին Յիսուս խօսում է աղքատ քերթօրէն եւ բարձր գնահատանքով: Յիրաւի, ոչինչ աւելի բացայայտօրէն հակաքրիստոնէական չէ, քան այն կարծի մտածողութիւնը, թէ ընկճուած, մոռաւանջ մարդիկ արժանի են այն վիճակին, որի մէջ արդէն ընկել են:

Անգլ. Թրգմնթ.

Յովնան Սրկ. Բաղդասարեան